

Դարտ

Դուք դարտ եք խաղում հետևյալ կանոններով.

Դուք կարող եք թիրախի ուղղությամբ նետել առավելագույնը 4 դարտ: Պարտադիր չէ բոլոր 4 դարտերը նետել: Թույլատրվում է ոչ մի դարտ չնետել: Թիրախը բաժանված է N մասի, և այդ մասերի միավորներն են P_1, \dots, P_N : Ձեր միավորը այս մասերի միավորների S գումարն է, ուր ձեր նետած դարտերը հարվածել են: Եթե S -ը չի գերազանցում տրված M թվին, ձեր միավորը S է: Սակայն, եթե S -ը գերազանցում է M -ին, ձեր միավորը դառնում է 0:

Գրել ծրագիր, որը ներածելով մասերի միավորները և M -ը, հաշվում է առավելագույն միավորը, որ կարելի է ստանալ:

Մուտքը

Առաջին տողում տրված են, իրարից մեկ բացակով անջատված N ($1 \leq N \leq 1000$) և

M ($1 \leq M \leq 200000000 = 2 \times 10^8$) ամբողջ թվերը: $(i + 1)$ -րդ տողը ($1 \leq i \leq N$) պարունակում է

P_i ($1 \leq P_i \leq 100000000 = 10^8$) ամբողջ թիվը:

Ելքը

Ելքում պետք է արտածել մի թիվ՝ առավելագույն միավորը, որ կարելի է ստանալ:

Օրինակ

Մուտքը.

4 50
3
14
15
9

Ելքը.

48

Մուտքը.

3 21
16
11
2

Ելքը.

20